ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2926-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.03900 մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Գ. Մարզպետունու փողոց թիվ 29 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3231

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2927-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Արամ Գրիգորյանի դիմումը՝ ք. Սևան, Խաղաղության 14 շենքի հյուսիս արևելյան հատվածում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 66.20քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Արամ Բաբկենի Գրիգորյանի կողմից՝ ք. Սևան, Խաղաղության 14 շենքի հյուսիս արևելյան հատվածում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 66.20քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 62.44քմ/ և զբաղեցրած 66.2քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի:
2. Արամ Գրիգորյանի կողմից ինքնակամ 66.2քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026T4GZ92/ տրամադրելով՝ Սևան համայնք ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 25 / 57 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն

իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 5-Ա որոշման 1-ին կետի:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2928-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Սերժիկ Սարգսյանի դիմումը՝ ք. Սևան, գ. Վարսեր, տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N 1057131, տրված՝ 30.08.2004թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, գ. Վարսեր, տնամերձ հասցեում գտնվող գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, 10-րդ փողոց թիվ 11 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3234

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2929-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Էդգար Ստեփանյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Էդգար Ստեփանյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Հանգստի գոտու 2-րդ փողոց թիվ 50 հասցեում գտնվող հողամասի բարեկարգման և կառուցապատման համար:
2. Էդգար Ստեփանյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3235

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2930-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արման Բաղդասարյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, գյուղ Զովաբեր, տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 418984, տրված՝ 13.05.2002թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գյուղ Զովաբեր, տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գյուղ Զովաբեր, 5-րդ փողոց թիվ 10 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2931-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Գայանե Գալստյանի դիմումը՝ ք. Սևան, Շահումյան, 10ա / 21 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N 2432795, տրված՝ 26.11.2010թ./համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Շահումյան, 10ա / 21 հասցեում գտնվող գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ս. Շահումյան փողոց, 10 շենք թիվ 43 բնակարան հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2932-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Վարդուհի Էլբակյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Վարդուհի Էլբակյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, գ. Չկալովկա, 4-րդ փողոց, 1-ին նրբանցք թիվ 6 հասցեում գտնվող հողատարածքում մեկ հարկանի փակ լողավազանի և թոնրատան կառուցման համար:
2. Վարդուհի Էլբակյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2933-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «ՊԱՊՐԻԿԱ» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Մախմուդյանի դիմումը, **որոշում եմ.**

1. «ՊԱՊՐԻԿԱ» ՍՊԸ-ին տրամադրել շինարարության թույլտվություն Գեղարքունիքի մարզի, Սևան համայնք, գ. Ծաղկունք, թիվ 8 հասցեում ջերմոցային տնտեսության գազամատակարարման, ԳԲԿ մետաղական ցանկապատի, օպերատորի աշխատասենյակի և 2 տեխնիկական սենյակի, տեխնոլոգիական շինության, մետաղական հենարանի և հարթակի, սանհանգույցի, հաշվիչի շինության և 220մմ/1788գծմ ստորգետնյա գազատարի կառուցման համար:
2. «ՊԱՊՐԻԿԱ» ՍՊԸ-ն շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «ՊԱՊՐԻԿԱ» ՍՊԸ-ն պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օրառաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3239

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2934-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «ՊԱՊՐԻԿԱ» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Մախմուդյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «ՊԱՊՐԻԿԱ» ՍՊԸ-ին տրամադրել շինարարության թույլտվություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Ծաղկունք թիվ 8 հասցեում կառուցվող ջերմոցային տնտեսության էլեկտրամատակարարման համար :
2. «ՊԱՊՐԻԿԱ» ՍՊԸ-ն շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «ՊԱՊՐԻԿԱ» ՍՊԸ-ն պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3240

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2935-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արկադի Պողոսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Վարսեր, Սևան-Երևան մայրուղի թիվ 26 / 1, Սևան համայնք, գ. Վարսեր, Սևան-Երևան մայրուղի թիվ 26 / 2 և Սևան համայնք, գ. Վարսեր, Սևան-Երևան մայրուղի թիվ 26 հասցեներում գտնվող /վկայականներ՝ N22062021-05-0031, N 26112021-05-0039 և 2386421/ անշարժ գույքերը միավորելու, միավորված անշարժ գույքի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Վարսեր, Սևան-Երևան մայրուղի թիվ 26 / 1, Սևան համայնք, գ. Վարսեր, Սևան-Երևան մայրուղի թիվ 26 / 2 և Սևան համայնք, գ. Վարսեր, Սևան-Երևան մայրուղի թիվ 26 հասցեներում գտնվող գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի, 57-58կմ 65 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3241

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2936-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-030-0219-0001 կադաստրային ծածկագրով /գ. Դդմաշեն/, 5.23987 հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, արոտավայր՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2937-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N 953-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2024 թվականի մայիսի 3-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի տնօրինման մասին» N 953-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2938-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Աշոտ Խչոյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 42 / 25 հասցեում կառուցված 26.40քմ մակերեսով ավտոտնակը, 10.06քմ մակերեսով նկուղը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 31.13քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չի հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 42 / 25 հասցեում գտնվող, Սևանի համայնքի ղեկավարի՝ 22.12.2023թ. թիվ 2094-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 23.04.2024թ. պետական գրանցում ստացած 26.40քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, 10.06քմ մակերեսով նկուղը՝ 1քմ՝ 3346 դրամ, զբաղեցրած 31.13քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5 դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած Աշոտ Խչոյանին:
2. Քաղ. Աշոտ Սերյոժայի Խչոյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3244

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2939-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արա Դորվանյանի դիմումը՝ վարձակալության իրավունքով իրեն պատկանող, ք. Սևան, Ս. Սևանեցու 17 շենքից հարավ-արևմուտք հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N 0100061, տրված՝ 13.06.2006թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Ս. Սևանեցու 17 շենքից հարավ-արևմուտք հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 17 / 3 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2940-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արտակ Ավետիսյանի դիմումը՝ ք. Սևան, գ. Նորաշեն, տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N 1529945, տրված՝ 25.05.2003թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, գ. Նորաշեն, տնամերձ հասցեում գտնվող գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Նորաշեն, 5-րդ փողոց թիվ 5 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2941-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «ԱՐԹԵՄ» ՍՊԸ-ի տնօրեն Արսեն Հովհաննիսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով «ԱՐԹԵՄ» ՍՊԸ-ին պատկանող, ք. Սևան, Երևանյան խճուղի, 18 / 1 հասցեում գտնվող անշարժ գույքի / վկայական՝ 2450462, տրված՝ 05.09.2007թ. / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով «ԱՐԹԵՄ» ՍՊԸ-ին պատկանող, ք. Սևան, Երևանյան խճուղի, 18 / 1 հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Երևանյան փողոց թիվ 76 առևտրի սրահ հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2942-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Էդգար Միքայելյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Էդգար Միքայելյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 26 / 39 հասցեում գտնվող հողամասում հասարակական նշանակության շինության կառուցման համար:
2. Էդգար Միքայելյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2943-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Մուրադ Մուրադյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, ք. Սևան, Ե.Չարենցի փողոց թիվ 38 հասցեում գտնվող 1210քմ մակերեսով հողատարածքը և հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփականության իրավունք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն կադաստրի կոմիտեի կողմից տրված տեխնիկական անձնագրի՝ **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 38 հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար նախատեսված 1210 քմ մակերեսով հողատարածքի և հողատարածքում 1970թ. կառուցված 183.35քմ մակերեսով բնակելի տան /ներքին մակերեսը՝ 138.60քմ/, 15.63քմ մակերեսով անասնաշենքի /ներքին մակերեսը՝ 13.2քմ/, 3.71քմ մակերեսով շվաքարանի 1/2-րդ բաժնի նկատմամբ ճանաչել Մուրադ Մուրադյանի սեփականության իրավունքը:
2. Ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 38 հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 38 բնակելի տուն հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3249

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2944-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Կարեն Ալոյանի դիմումը՝ ք. Սևան, գ. Ծաղկունք, տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N2163301, տրված՝ 11.02.2002թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, գ. Ծաղկունք, տնամերձ հասցեում գտնվող գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Ծաղկունք, 5-րդ փողոց, 5-րդ նրբանցք թիվ 20 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3250

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2945-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշումներով և հիմք ընդունելով քաղ. Գոռ Մկրտչյանի դիմումը՝ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի՝ իրեն պատկանող, ք. Սևան, Չարենցի փողոց թիվ 52 հասցեում գտնվող 1120.0քմ մակերեսով հողատարածքը և հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփականության իրավունք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Գոռ Վազգենի Մկրտչյանին /ծնված՝ 21.11.1988թ./ պատկանող, ք. Սևան, Չարենցի փողոց թիվ 52 հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 1120.0 քմ մակերեսով հողատարածքին կից՝ 224.0քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Գոռ Մկրտչյանի սեփականության իրավունքը:
2. Սեփականության իրավունքով Գոռ Վազգենի Մկրտչյանին պատկանող 1344.0քմ մակերեսով հողատարածքում 1968թ.կառուցված 13.6քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը՝ 8.2քմ/, 3.1քմ մակերեսով աստիճանահարթակները, 118.4քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 90.2քմ/, 84.1քմ մակերեսով օժանդակ շինությունը /ներքին մակերեսը՝ 61.0քմ/ ճանաչել Գոռ Վազգենի Մկրտչյանի սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 52 բնակելի տուն հասցե:
3. Գոռ Վազգենի Մկրտչյանին պատկանող 1344.0քմ մակերեսով հողատարածքում սեփականատիրոջ կողմից 2020թ.կառուցված 98.4քմ մակերեսով տնտեսական շինությունը /ներքին մակերեսը՝ 83.3քմ/, 22.0քմ մակերեսով ծածկը ճանաչել ինքնակամ:
4. Գոռ Վազգենի Մկրտչյանին պատկանող 1344.0քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 208.0քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային

սեփականություն՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 52 / 1 հողամաս հասցե՝ ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքի 30% վճարելու պայմանով /1քմ՝ 962.5դրամ/ օտարել Գոռ Վազգենի Մկրտչյանին :

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2946-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 25-րդ, 27-րդ և 32-րդ կետերով, հիմք ընդունելով քաղ. Գագիկ Ղազարյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց, 7 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 30 հասցեում գտնվող բնակարանին կից՝ սեփականատիրոջ կողմից 2015թ. ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Գագիկ Արմիկի Ղազարյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց, 7 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 30 բնակարան հասցեում՝ սեփականատիրոջ կողմից 2015թ. ինքնակամ կառուցված 3.80քմ մակերեսով բնակարանին /ներքին մակերեսը՝ 3.30քմ/ կից կառույցը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026SLA9P3/՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 590.7 դրամ:
2. Սեփականության իրավունքով Գագիկ Արմիկի Ղազարյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց, 7 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 30 բնակարան հասցեում՝ սեփականատիրոջ կողմից կատարված ներքին ձևափոխման աշխատանքները ճանաչել օրինական՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր ձևափոխված դռան և պատուհանի համար՝ 1969 դրամ /4 հատ դուռ, 1 հատ պատուհան/:
3. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3253

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2947-Ա

ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 28.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, 12.04.2001թ. N286 որոշման 3-րդ կետի «ը» ենթակետով, հիմք ընդունելով քաղ. Ալիտա Կարապետյանի դիմումը՝ իր կողմից փաստացի տիրապետվող 400քմ մակերեսով հողատարածքը, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքացիների իրավունքները հաստատող փաստաթղթերը, անհատույց սեփականության իրավունքով իրեն հատկացնելու, մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, հաշվի առնելով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, նկատի ունենալով, որ կատարվել են համապատասխան վճարումները, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Գոմաձոր թաղամաս հասցեում գտնվող, 05-004-0107-0044 կադաստրային ծածկագրով 400քմ մակերեսով հողամասն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Ալիտա Սերգեյի Կարապետյանին /ծնված՝ 15.05.1952թ./ համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի:
2. Ալիտա Սերգեյի Կարապետյանի կողմից՝ ք. Սևան, Գոմաձոր թաղամաս հասցեում գտնվող 400քմ մակերեսով հողատարածքում կառուցված 86.80քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 64.99քմ/, 12.25քմ մակերեսով ծածկը ճանաչել Ալիտա Սերգեյի Կարապետյանի սեփական գույքը, տրամադրել Սևան համայնք,ք. Սևան, 26 Կոմիսարների փողոց, 2-րդ նրբանցք թիվ 19 բնակելի տուն հասցե:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3254

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2948-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Գագիկ Ղազարյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Գագիկ Ղազարյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 6 հասցեում գտնվող հողամասում հասարակական նշանակության շինության կառուցման համար:
2. Գագիկ Ղազարյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3255

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2949-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Արման Հայրապետյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Արման Հայրապետյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Շ. Ազնավուրի փողոց, թիվ 25 հասցեում գտնվող հողամասում մանսարդային հարկով մեկ հարկանի բնակելի տան և ցանկապատի կառուցման համար:
2. Արման Հայրապետյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Արման Հայրապետյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3256

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2950-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Արսեն Գրիգորյանի դիմումը՝ Սևան համայնքի Նորաշեն գյուղում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 66.20քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Արսեն Հենրիկի Գրիգորյանի կողմից՝ Սևան համայնքի Նորաշեն գյուղում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 28.20քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 21.15քմ/, 65.52քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 53.79քմ/, 10.69քմ մակերեսով խորդանոցը /ներքին մակերեսը՝ 9.55քմ/ և զբաղեցրած 542քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա Նորաշեն բնակավայրի գլխավոր հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, այլ հողեր՝ գործառնական նշանակության հողատարածքի:
2. Արսեն Գրիգորյանի կողմից ինքնակամ 28.20քմ և 65.52քմ մակերեսներով անասնաշենքերը, 10.69քմ մակերեսով խորդանոցը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026JEF37L/՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Նորաշեն, 3-րդ փողոց թիվ 7 խորդանոց հասցե:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 5-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3258

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2951-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Պարույր Մանուկյանի դիմումը՝ ք. Սևան, Խաղաղության փողոցի վերջնամասում, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 52.62քմ մակերեսով ավտոտնակը, 43.94քմ մակերեսով անասնաշենքը, 7.28քմ և 15.03քմ մակերեսներով ծածկերը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Պարույր Մայիսի Մանուկյանի կողմից՝ ք. Սևան, Խաղաղության փողոցի վերջնամասում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 52.62 քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 45.34քմ/, 43.94քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 39.84քմ/, 7.28քմ և 15.03քմ մակերեսներով ծածկերը, զբաղեցրած 151.0քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի:
2. Պարույր Մանուկյանի կողմից ինքնակամ 52.62 քմ մակերեսով ավտոտնակը, 43.94քմ մակերեսով անասնաշենքը, 7.28քմ և 15.03քմ մակերեսներով ծածկերը

ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026AKFMJM/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 25 / 61 ավտոտնակ հասցե:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 5-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2952-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N 550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Հեղինե Սաղաթելյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 26082026-05-0048/ զբաղեցրած 0.7614 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Հեղինե Վանիկի Սաղաթելյանին պատկանող, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող անշարժ գույքի զբաղեցրած 0.7614 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.76084 հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, գ. Գեղամավան, վկայական՝ 14102026-05-0074/՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Հեղինե Վանիկի Սաղաթելյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 10.75 դրամ, վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2953-Ա

Ք. ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 24 / 13Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՄԻԿ ՄԿՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.
Քաղաքացի Համիկ Հայկարամի Մկոյանին՝ Սևանա լճի առափնյա գոտում՝ ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող, վարձակալական իրավունքով տրամադրված հողատարածքում առանց շինարարության թույլտվության առկա են ինքնակամ շինություններ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ հարուցվել է վարչական վարույթ:

2.Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.
Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում՝ ձեռք բերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝

ա. 20.07.2007թվականին քաղաքացիներ Տիգրան Շխյանի և Համիկ Մկոյանի միջև կնքվել է անշարժ գույքի (շինությունների) առուվաճառքի պայմանագիր: Համաձայն այդ պայամագրի՝ Համիկ Մկոյանին վաճառվել է 230քմ մակերեսով պահեստ, 35քմ մակերեսով էլեկտրական ենթակայան և 15քմ մակերեսով պահակատուն, որը հաստատվում է քաղաքացի Տիգրան Շխյանին սեփականության իրավունքով պատկանող շինությունների թիվ 1100037 պետական գրանցման վկայականով: Առքուվաճառքի պայմանագրի հիմքով գրանցված է Համիկ Հայկարամի Մկոյանի հողամասի նկատմամբ վարձակալության, շինությունների նկատմամբ՝ սեփականության իրավունքը (վկայական՝ 2452457):

բ. 01.10.2026թվականի ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ քաղաքացի Համիկ Հայկարամի Մկոյանը՝ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին պատկանող, պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման պատկանող, բնության հատուկ պահպանվող տարածքում առանց օրենքով սահմանված շինարարության թույլտվության կառուցել է ինքնակամ շինություններ՝ բազալտ քարից կառուցված, 159.5 մետր երկարությամբ և 2.80 մետր բարձրությամբ (44 սմ – 2.50 մետր բարձրություն) պարիսպ: Սևանի համայնքապետարանը անհրաժեշտությունից ելնելով՝ ինքնակամ շինությունների առկայության փաստը հաստատելու նպատակով պատվիրել է մասնագիտական եզրակացություն: Ըստ եզրակացության և Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի տեղեկանքի համաձայն՝ Սևանա լճի ռեկրացիոն գոտում համայնքապետարանի կողմից չի տրվել շինարարության թույլտվություն բազալտե պարսպի կառուցման նպատակով:

Ուստի, անհրաժեշտություն է առաջանում օրենքով սահմանված կարգով՝ վարձակալությամբ Համիկ Մկոյանին պատկանող հողամասն ազատել ինքնակամ կառուցված շինություններից:

գ. Հարուցված վարչական վարույթի շրջանակներում քաղաքացին սահմանված կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել Սևանի համայնքապետարան օրենքով սահմանված կարգով լսումներին մասնակցելու և պարզաբանումներ տալու նպատակով:

դ. Համաձայն ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի պահանջների՝ քաղաքացի Համիկ Մկոյանին ուղղված ծանուցումը տեղադրվել է «azdarar.am» կայքում: Օրենքով սահմանված ժամկետի լրանալուց հետո քաղաքացին համարվել է ծանուցված: Ծանուցմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո էլ քաղաքացին չի ներկայացել վարչական գործի քննությանը:

3. Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Համաձայն ՀՀ «Քաղաքացիական» օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները (շինությունները)՝

ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ. որոնք կառուցված են Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Նույն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված է, որ սույն կարգով նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացումը մերժվում է համապատասխան որոշմամբ, եթե դրանք չեն բավարարում քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման

պայմանները: ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման հավելվածի 33-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին: «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներին համապատասխան՝ պետական սեփականություն հանդիսացող հողատարածքներում համայնքի ղեկավարը կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինարարությունը, ընդունում է որոշում ինքնակամ շինության ապամոնտաժման (քանդման) վերաբերյալ և ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ: Հաստատված փաստ է, որ քաղաքացի Համիկ Մկոյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունները գտնվում են Սևանա լճի ռեկրացիոն գոտում և 1905.0 բացարձակ նիշից ցածր տարածքներում: Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 44-րդ հոդվածի 2-րդ մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի, 1-ին կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների դրույթները, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջները՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել քաղաքացի Համիկ Մկոյանին վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքում առկա ինքնակամ շինությունները՝ բազալտե քարից կառուցված պարիսպ՝ 159.5 մետր երկարությամբ և 2.80 մետր բարձրությամբ (44 սմ – 2.50 մետր բարձրություն):

2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշմամբ նախատեսված ապամոնտաժման և դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը՝ դատական կարգով բռնագանձել ինքնակամ շինություն իրականացրած անձից:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2954-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Ջեմմա Ոսկանյանի դիմումը՝ ք. Սևան, Գրիբոյեդովի փողոցում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Գրիբոյեդովի փողոցում՝ վարձակալության իրավունքով Ջեմմա Վաչագանի Ոսկանյանին պատկանող 30.0քմ մակերեսով հողատարածքը և հողատարածքի վրա 2003 թվականին ավտոտնակին կից կառուցված 1.74 քմ մակերեսով ծածկը, ավտոտնակի 2-րդ հարկում ինքնակամ կառուցված 27.89 քմ մակերեսով տնտեսական շինությունը (ներքին մակերեսը՝ 24.68 քմ) և 2.16 քմ մակերեսով պատշգամբը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Ջեմմա Վաչագանի Ոսկանյանի կողմից ինքնակամ կառուցված 1.74 քմ մակերեսով ծածկը, 27.89 քմ մակերեսով տնտեսական շինությունը և 2.16 քմ մակերեսով պատշգամբը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026GQYJVT/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 3 / 32 տնտեսական շինություն հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 5-Ա որոշման 1-ին կետի:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2955-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 1546-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հունիսի 19-ի «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին» 1546-Ա որոշման 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «Սևան համայնք, ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 44 / 2 ավտոտնակ հասցե» բառերի փոխարեն կարդալ «Սևան համայնք, ք. Սևան, Էներգետիկների փողոց թիվ 1 / 42 ավտոտնակ հասցե» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2956-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Սվետլանա Գրիգորյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց, թիվ 181 / 12 հասցեում գտնվող բնակարանին կից կացակառույցի կառուցման համար Սվետլանա Գրիգորյանին տրամադրված Սևան համայնքի ղեկավարի՝ 22.06.2026 N ՇԹ/29/30701-26 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 6 ամիս ժամկետով:
2. Սվետլանա Գրիգորյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2957-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 12.04.2001թ. N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետով, հիմք ընդունելով քաղ. Ռազմիկ Գաբրիելյանի դիմումը՝ վարձակալության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող 1.2488 հա մակերեսով հողատարածքն /վկայական՝ 13072026-05-0039/ ուղղակի վաճառքի կարգով իրեն օտարելու մասին, նկատի ունենալով, որ հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Վարձակալության իրավունքով Ռազմիկ Հովհաննեսի Գաբրիելյանին պատկանող, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության 1.2488 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարել Ռազմիկ Հովհաննեսի Գաբրիելյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 10.75 դրամ, վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3270

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2958-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 12.04.2001թ. N 286 որոշման 43-րդ կետով, հիմք ընդունելով քաղ. Ռազմիկ Գաբրիելյանի դիմումը՝ վարձակալության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող 1.2 հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 15072026-05-0021/ ուղղակի վաճառքի կարգով իրեն օտարելու մասին, նկատի ունենալով, որ հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Վարձակալության իրավունքով Ռազմիկ Հովհաննեսի Գաբրիելյանին պատկանող, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության 1.2 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարել Ռազմիկ Հովհաննեսի Գաբրիելյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 10.75 դրամ, վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3271

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2959-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Ռազմիկ Գաբրիելյանի դիմումը՝ համատեղ սեփականության իրավունքով Ռազմիկ Գաբրիելյանին, Արմեն Գաբրիելյանին, Հայկանուշ Գաբրիելյանին, Երազ Մանուկյանին և Հովհաննես Գաբրիելյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան հասցեում վարելահողի /վկայական՝ 1600581, տրված 02.05.2003թ./ զբաղեցրած 0.626 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք,

որոշում եմ.

1. Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան, վարելահող հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 0.626 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.05186 հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, գ. Գեղամավան, վկայական՝ 09102026-05-0053/ ՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Ռազմիկ Գաբրիելյանին, Արմեն Գաբրիելյանին, Հայկանուշ Գաբրիելյանին, Երազ Մանուկյանին և Հովհաննես Գաբրիելյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 52.125 ՀՀ դրամ, վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3272

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2960-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Ռազմիկ Գաբրիելյանի դիմումը՝ համատեղ սեփականության իրավունքով Ռազմիկ Գաբրիելյանին, Արմեն Գաբրիելյանին, Հայկանուշ Գաբրիելյանին, Երազ Մանուկյանին և Հովհաննես Գաբրիելյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան, վարելահող հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 1600582, տրված 02.05.2004թ./ զբաղեցրած 0.900 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան հասցեում գտնվող վարելահողի զբաղեցրած 0.900 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.10934 հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, գ. Գեղամավան, վկայական՝ 08102026-05-0024/՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Ռազմիկ Գաբրիելյանին, Արմեն Գաբրիելյանին, Հայկանուշ Գաբրիելյանին, Երազ Մանուկյանին և Հովհաննես Գաբրիելյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 109.875 ՀՀ դրամ, վճարելու պայմանով:
2. Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան, վարելահող հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 0.900 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.04184 հա մակերեսով, Սևան համայնք, գ. Գեղամավան հասցեում գտնվող /վկայական՝ 08102026-05-0065/ հողատարածքով՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Ռազմիկ Գաբրիելյանին, Արմեն Գաբրիելյանին, Հայկանուշ Գաբրիելյանին, Երազ Մանուկյանին և Հովհաննես Գաբրիելյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 42.050 ՀՀ դրամ, վճարելու պայմանով:
3. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 22
ք.Սևան

3273

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2961-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 2887-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հոկտեմբերի 16-ի «Հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին» N 2887-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «հողատարածքն ընդլայնել 0.00448 հա մակերեսով» բառերի փոխարեն կարդալ «հողատարածքն ընդլայնել 0.0121 հա մակերեսով» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Սևան

3274

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2962-Ա

Ք. ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ, 26 / 2 ԲՆԿ 34 ԲՆԱԿԻՉ, «ՇԱԲ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԲԱԽՇԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

1.Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.
«ՇԱԲ» ՍՊԸ-ի տնօրեն Բախշի Սողոմոնյանը՝ ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի հետ կնքված հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առանց տեղադրման (շինարարության) թույլտվության տեղադրվել է՝ մեկ հատ շարժական տնակ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ հարուցվել է վարչական վարույթ:

2.Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.
Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում՝ ձեռք բերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝

ա. ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության կողմից իրավախախտում կատարելու վերաբերյալ N 040226342 կազմված արձանագրության համաձայն «ՇԱԲ» ՍՊԸ-ի տնօրեն Բախշի Սողոմոնյանը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին պատկանող՝ պետական սեփականություն հանդիսացող ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման պատկանող, բնության հատուկ պահպանվող տարածքում առանց օրենքով սահմանված տեղադրման (շինարարության) թույլտվության տեղադրել է ինքնակամ շինություն: Ուստի անհրաժեշտություն է առաջանում ազատել հիշյալ հողամասը ինքնակամ տեղադրված շինությունից:

բ. Հարուցված վարչական վարույթի շրջանակներում քաղաքացին սահմանված կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել Սևանի համայնքապետարան օրենքով սահմանված կարգով լսումներին մասնակցելու և պարզաբանումներ տալու նպատակով: Հարուցված վարույթի նյութերը մանրամասն ուսումնասիրելու և իրավախախտի պարզաբանումները ստանալու նպատակով 09.10.2026թվականին Սևանի համայնքի ղեկավարը վարչական վարույթը կասեցրել է:

գ.Համաձայն ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի պահանջների «ՇԱԲ» ՍՊԸ-ի տնօրենին ուղղված ծանուցումը տեղադրվել է «azdarar.am» կայքում: Օրենքով սահմանված ժամկետի լրանալուց հետո ՍՊԸ-ի տնօրենը համարվել է ծանուցված: Ծանուցմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո ՍՊԸ-ի տնօրենը չի ներկայացել վարչական գործի քննությանը:

3. Համաձայն ՀՀ «Քաղաքացիական» օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց

թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները (շինությունները)՝

ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ. որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով:

Նույն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված է, որ սույն կարգով նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացումը մերժվում է համապատասխան որոշմամբ, եթե դրանք չեն բավարարում քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման պայմանին: ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման հավելվածի 33-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին: «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներին համապատասխան պետական սեփականություն հանդիսացող հողատարածքներում համայնքի ղեկավարը կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինարարությունը, ընդունում է որոշում ինքնակամ շինության ապամոնտաժման (քանդման) վերաբերյալ և ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են

համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ: Համաձայն ՀՀ կառավարության 18.12.2008թ. 1563-Ն որոշման պահանջներով հաստատված փաստ է, որ քաղաքացի Բախշի Սողոմոնյանի կողմից ինքնակամ տեղադրված շինությունները գտնվում են Սևանա լճի ռեկրացիոն գոտում և 1905.0 բացարձակ նիշից ցածր տարածքներում: Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի, 1-ին կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների դրույթները, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջները՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել՝ «ՇԱԲ» ՍՊԸ-ի տնօրեն Բախշի Սողոմոնյանին կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշմամբ նախատեսված ապամոնտաժման և դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը՝ դատական կարգով բռնագանձել ինքնակամ շինություն իրականացրած անձից:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2963-Ա

Ք. ԱԲՈՎՅԱՆ, ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ, 7-55 ԲՆԱԿԻՉ, «ՄԻԽԱԻԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՄԻԽԱԻԼ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

1.Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

«Միխաիլ Պետրոսյան» ՍՊԸ-ի տնօրեն Միխաիլ Պետրոսյանը ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի հետ կնքված հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առանց տեղադրման (շինարարության) թույլտվության տեղադրվել է՝ մեկ հատ փայտե տնակ և մեկ հատ քարե սանհանգույց: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ հարուցվել է վարչական վարույթ:

2.Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում՝ ձեռք բերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝

ա. ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության կողմից իրավախախտում կատարելու վերաբերյալ N 040226345 կազմված արձանագրության համաձայն «Միխաիլ Պետրոսյան» ՍՊԸ-ի տնօրեն Միխաիլ Պետրոսյանը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին պատկանող՝ պետական սեփականություն հանդիսացող ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման պատկանող, բնության հատուկ պահպանվող տարածքում առանց օրենքով սահմանված տեղադրման (շինարարության) թույլտվության տեղադրել է ինքնակամ շինություններ: Ուստի անհրաժեշտություն է առաջանում ազատել հիշյալ հողամասը ինքնակամ տեղադրված շինություններից:

բ. Հարուցված վարչական վարույթի շրջանակներում քաղաքացին սահմանված կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել Սևանի համայնքապետարան օրենքով սահմանված կարգով լսումներին մասնակցելու և պարզաբանումներ տալու նպատակով: Հարուցված վարույթի նյութերը մանրամասն ուսումնասիրելու և իրավախախտի պարզաբանումները ստանալու նպատակով 09.10.2026թվականին Սևանի համայնքի ղեկավարը վարչական վարույթը կասեցրել է:

գ.Համաձայն ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի պահանջների «Միխաիլ Պետրոսյան» ՍՊԸ-ի տնօրենին ուղղված ծանուցումը տեղադրվել է «azdarar.am» կայքում: Օրենքով սահմանված ժամկետի լրանալուց հետո ՍՊԸ-ի տնօրենը համարվել է ծանուցված: Ծանուցմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո ՍՊԸ-ի տնօրենը չի ներկայացել վարչական գործի քննությանը:

3. Համաձայն ՀՀ «Քաղաքացիական» օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով

սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները (շինությունները)՝

ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ. որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով:

Նույն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված է, որ սույն կարգով նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացումը մերժվում է համապատասխան որոշմամբ, եթե դրանք չեն բավարարում քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման պայմանին: ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման հավելվածի 33-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին: «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրվածճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներին համապատասխան պետական սեփականություն հանդիսացող հողատարածքներում համայնքի ղեկավարը կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինարարությունը, ընդունում է որոշում ինքնակամ շինության ապամոնտաժման (քանդման) վերաբերյալ և ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե վարչական

վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ: Համաձայն ՀՀ կառավարության 18.12.2008թ. 1563-Ն որոշման պահանջներով հաստատված փաստ է, որ քաղաքացի Միխաիլ Պետրոսյանի կողմից ինքնակամ տեղադրված շինությունները գտնվում են Սևանա լճի ռեկրացիոն գոտում և 1905.0 բացարձակ նիշից ցածր տարածքներում: Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի, 1-ին կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների դրույթները, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջները՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել՝ «Միխաիլ Պետրոսյան» ՍՊԸ-ի տնօրեն Միխաիլ Պետրոսյանին կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշմամբ նախատեսված ապամոնտաժման և դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը՝ դատական կարգով բռնագանձել ինքնակամ շինություն իրականացրած անձից:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Սևան

3280

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2964-Ա

Ք. ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՓՈՂՈՑ, 43ՇԵՆՔ, ԲՆԱԿԱՐԱՆ 14 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ԷԴՎԱՐԴ ԱԴԱՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

1.Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

Քաղաքացի Էդվարդ Ադամյանի ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի կողմից կնքված հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առանց տեղադրման (շինարարության) թույլտվության տեղադրվել է՝ երկու հատ մետաղյա զրուցարան և երկու հատ մետաղյա տնակ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ հարուցվել է վարչական վարույթ:

2.Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում՝ ձեռք բերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝

ա. ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության կողմից իրավախախտում կատարելու վերաբերյալ N 040226323 կազմված արձանագրության համաձայն քաղաքացի Էդվարդ Ադամյանը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին պատկանող՝ պետական սեփականություն հանդիսացող ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման պատկանող, բնության հատուկ պահպանվող տարածքում առանց օրենքով սահմանված տեղադրման (շինարարության) թույլտվության տեղադրել է ինքնակամ շինություններ: Ուստի անհրաժեշտություն է առաջանում ազատել հիշյալ հողամասը ինքնակամ տեղադրված շինություններից:

բ. Հարուցված վարչական վարույթի շրջանակներում քաղաքացին սահմանված կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել Սևանի համայնքապետարան օրենքով սահմանված կարգով լսումներին մասնակցելու և պարզաբանումներ տալու նպատակով: Հարուցված վարույթի նյութերը մանրամասն ուսումնասիրելու և իրավախախտի պարզաբանումները ստանալու նպատակով 09.10.2026թվականին Սևանի համայնքի ղեկավարը վարչական վարույթը կասեցրել է:

գ.Համաձայն ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի պահանջների քաղաքացի Էդվարդ Ադամյանին ուղղված ծանուցումը տեղադրվել է «azdarar.am» կայքում: Օրենքով սահմանված ժամկետի լրանալուց հետո քաղաքացին համարվել է ծանուցված: Ծանուցմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո քաղաքացին չի ներկայացել վարչական գործի քննությանը:

3. Համաձայն ՀՀ «Քաղաքացիական» օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց

թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները (շինությունները)՝

ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ. որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով:

Նույն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված է, որ սույն կարգով նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացումը մերժվում է համապատասխան որոշմամբ, եթե դրանք չեն բավարարում քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման պայմանին: ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման հավելվածի 33-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին: «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներին համապատասխան՝ պետական սեփականություն հանդիսացող հողատարածքներում համայնքի ղեկավարը կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինարարությունը, ընդունում է որոշում ինքնակամ շինության ապամոնտաժման (քանդման) վերաբերյալ և ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե վարչական

վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ: Համաձայն ՀՀ կառավարության 18.12.2008թ. 1563-Ն որոշման պահանջներով հաստատված փաստ է, որ քաղաքացի Էդվարդ Ադամյանի կողմից ինքնակամ տեղադրված շինությունները գտնվում են Սևանա լճի ռեկրացիոն գոտում և 1905.0 բացարձակ նիշից ցածր տարածքներում: Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի, 1-ին կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների դրույթները, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջները՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել՝ քաղաքացի Էդվարդ Ադամյանի կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշմամբ նախատեսված ապամոնտաժման և դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը՝ դատական կարգով բռնագանձել ինքնակամ շինություն իրականացրած անձից:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Սևան

3283

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2965-Ա

Ք. ԵՐԵՎԱՆ, ԴԵՂԱՏԱՆ ՓՈՂՈՑ, 15 ՇԵՆՔ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

1.Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

Քաղաքացի Գևորգ Գևորգյանը՝ ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի հետ կնքված հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առանց տեղադրման (շինարարության) թույլտվության տեղադրվել է՝ մեկ հատ վագոն-տնակ, երկու հատ մետաղական կոնստրուկցիաներով տաղավար: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ հարուցվել է վարչական վարույթ:

2.Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում՝ ձեռք բերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝

ա. ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության կողմից իրավախախտում կատարելու վերաբերյալ N 040226283 կազմված արձանագրության համաձայն քաղաքացի Գևորգ Գևորգյանը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին պատկանող՝ պետական սեփականություն հանդիսացող ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման պատկանող, բնության հատուկ պահպանվող տարածքում առանց օրենքով սահմանված տեղադրման (շինարարության) թույլտվության տեղադրել է ինքնակամ շինություններ: Ուստի անհրաժեշտություն է առաջանում ազատել հիշյալ հողամասը ինքնակամ տեղադրված շինություններից:

բ. Հարուցված վարչական վարույթի շրջանակներում քաղաքացին սահմանված կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել Սևանի համայնքապետարան օրենքով սահմանված կարգով լսումներին մասնակցելու և պարզաբանումներ տալու նպատակով: Հարուցված վարույթի նյութերը մանրամասն ուսումնասիրելու և իրավախախտի պարզաբանումները ստանալու նպատակով 25.09.2026թվականին Սևանի համայնքապետը վարչական վարույթը կասեցրել է:

գ. Համաձայն ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի պահանջների քաղաքացի Գևորգ Գևորգյանի ուղղված ծանուցումը տեղադրվել է «azdarar.am» կայքում: Օրենքով սահմանված ժամկետի լրանալուց հետո քաղաքացին համարվել է ծանուցված: Ծանուցմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո քաղաքացին չի ներկայացել վարչական գործի քննությանը:

3. Համաձայն ՀՀ «Քաղաքացիական» օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով

սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները: Իրավահարաբերությունների ծագման պահին գործող ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները (շինությունները)՝

ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ. որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով:

Նույն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված է, որ սույն կարգով նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացումը մերժվում է համապատասխան որոշմամբ, եթե դրանք չեն բավարարում քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման պայմանին: ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման հավելվածի 33-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին: «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրվածճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներին համապատասխան՝ պետական սեփականություն հանդիսացող հողատարածքներում համայնքի ղեկավարը կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինարարությունը, ընդունում է որոշում ինքնակամ շինության ապամոնտաժման (քանդման) վերաբերյալ և ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե վարչական

վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ: Համաձայն ՀՀ կառավարության 18.12.2008թ. 1563-Ն որոշման պահանջներով հաստատված փաստ է, որ քաղաքացի Գևորգ Գևորգյանի կողմից ինքնակամ տեղադրված շինությունները գտնվում են Սևանա լճի ռեկրացիոն գոտում և 1905.0 բացարձակ նիշից ցածր տարածքներում: Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի, 1-ին կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների դրույթները, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջները՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել՝ քաղաքացի Գևորգ Գևորգյանի կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունները:
2. Առաջարկել ՀՀ ՆԳՆ Ոստիկանության համայնքային գլխավոր վարչության Սևանի ներքին գործերի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշմամբ նախատեսված ապամոնտաժման և դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը՝ դատական կարգով բռնագանձել ինքնակամ շինություն իրականացրած անձից:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Սևան

3286

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2966-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, «Վարչական հիմունքների և Վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի և 2-րդ կետի ա) ենթակետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Կասեցնել Արթուր Մկրտչյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Վարույթը վերսկսել կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալուց հետո:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2967-Ա

«ԳԵԳԱ-ՍԹԱՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՇԽԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, «Վարչական հիմունքների և Վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի և 2-րդ կետի ա) ենթակետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Կասեցնել «Գեգա-Սթար» ՍՊԸ-ի տնօրեն Աշխեն Մաթևոսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Վարույթը վերսկսել կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալուց հետո:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2968-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 2285-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի սեպտեմբերի 3-ի «Ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինական ճանաչելու մասին» N2285-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման նախաբանում՝ «18-րդ կետով» բառերից հետո կարդալ «11-րդ կետի զ) ենթակետի՝ այն է. կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ իրավունքի պետական գրանցման վկայականի կամ կառույցը հաշվառված լինելու մասին Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանքի վերաբերյալ տվյալներ» բառերը;

2) որոշման նախաբանում՝ «Նաիրյան փողոց թիվ 181 / 22 հասցեում գտնվող 89.4քմ մակերեսով հողատարածքում» բառերից հետո կարդալ «/վկայական՝ N 05032025-05-0057, տրված՝ 05.03.2025թ./» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2969-Ա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ, 3.1 մասերով, 4-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24) կետը՝ **որոշում եմ.**

1. 2026 թվականի նոյեմբերի 29-ին կայանալիք Տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նպատակով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի տարածքում մինչև 5քմ մակերեսով քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար առանձնացնել անվճար վահանակներ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստոևագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Սևան

3290

Հավելված
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի
հոկտեմբերի 23-ի N2969-Ա որոշման

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈՂՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌ, ՔԱՐՈՂՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Համայնք/ Բնակավայր	Վահանակի գտնվելու վայրը/հասցեն	Վահանակի մակերեսը (քմ), քանակը	Յուրաքանչյուր կուսակցության, կուսակցություն ների դաշինքի կողմից օգտագործվող վահանակի մակերեսը (քմ)
1.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Ս. Շահումյան փողոց թիվ 6 շենքի հարավային հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
2.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Ս. Շահումյան փողոց թիվ 12 շենքի հյուսիսային հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
3.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Ս. Շահումյան փողոց թիվ 14 շենքի հյուսիսային հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
4.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Ս. Շահումյան փողոց թիվ 33 շենքի հարավային հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
5.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Ս. Շահումյան փողոց թիվ 37 շենքի հարավային հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
6.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Ելենովկա փողոց թիվ 10 շենքի արևելյան հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ


7.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 3 շենքի հարավային հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
8.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 4 շենքի հյուսիսային հատված	2.0մx2.5 մ չափերի 1 հատ	1.6 քմ
9.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 139 շենքի հարավային հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
10.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 143 շենքի հարավային հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
11.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 148 շենքի հյուսիսային հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
12.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 168 շենքի արևմտյան հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
13.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 181 շենքի հարավային հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
14.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 2 շենքի արևելային հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
15.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 8 շենքի արևելյան հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
16.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 16 շենքի արևելյան հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
17.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Ս. Սևանեցի փողոց թիվ 7 շենքի արևմտյան հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ

18.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Ս. Սևանեցի փողոց թիվ 15 շենքի արևմտյան հատված	2.0մx2.5մ չափերի 1 հատ	1.6 քմ
19.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Ս. Սևանեցի փողոց թիվ 21 շենքի արևմտյան հատված	2.0մx2.5 մ չափերի 1 հատ	1.6 քմ
20.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 12 շենքի արևմտյան հատված	2.0մx2.5 մ չափերի 1 հատ	1.6 քմ
21.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 25 շենքի արևմտյան հատված	2.0մx2.5 մ չափերի 1 հատ	1.6 քմ
22.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 40 շենքի հյուսիսային հատված	2.0մx2.5 մ չափերի 1 հատ	1.6 քմ
23.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 45 շենքի հարավային հատված	2.0մx2.5 մ չափերի 1 հատ	1.6 քմ
24.	**Սևան/Սևան**	ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 61 շենքի հարավային հատված	2.0մx2.5 մ չափերի 1 հատ	1.6 քմ
25.	**Սևան/Զովաբեր**	բնակավայրի կենտրոնական կանգառի հարակից տարածք՝ 1-ին փողոցի խաչմերուկ	2.5մx2.5մ չափերի 1 հատ, երկկողմանի	4.0քմ
26.	**Սևան/Գեղամավան**	բնակավայրի կենտրոնական կանգառի հարևանությամբ՝ Սուրբ Հակոբ եկեղեցուն հարող տարածք	2.5մx2.5 մ չափերի 1 հատ, երկկողմանի	4.0քմ
27.	**Սևան/Նորաշեն**	բնակավայրի մշակույթի տան դիմաց՝ 4-րդ փողոց	2.5մx2.5 մ չափերի 1 հատ, երկկողմանի	4.0քմ
28.	**Սևան/Վարսեր**	բնակավայրի մշակույթի ակումբի դիմաց՝ 1-ին փողոց, 47 շենք	2.5մx2.5 մ չափերի 1 հատ, երկկողմանի	4.0քմ

29.	**Սևան/Դդմաշեն**	բնակավայրի կուլտուրայի պալատի դիմաց՝ 1-ին փողոց 53 շենք	2.5մx2.5 մ չափերի 1 հատ, երկկողմանի	4.0քմ
30.	**Սևան/Լճաշեն**	բնակավայրի կենտրոնական կանգառի հարևանությամբ՝ 1-ին փողոցի խաչմերուկ	2.5մx2.5 մ չափերի 1 հատ, երկկողմանի	4.0քմ
31.	**Սևան/Ծաղկունք**	բնակավայրի զբոսայգու հարակից տարածք՝ 1-ին փողոց	2.5մx2.5 մ չափերի 1 հատ, երկկողմանի ընդհանուր՝ 12,5 քմ	4.0քմ
32.	**Սևան/Չկալովկա**	բնակավայրի կենտրոնական կանգառի հարևանությամբ՝ 1-ին փողոց, 1-ին փակուղի	2.5մx2.5 մ չափերի 1 հատ, երկկողմանի	4.0քմ
33.	**Սևան/Ծովագյուղ**	բնակավայրում գտնվող Մուրացանի արձանին հարող տարածք՝ 1-ին փողոց	2.5մx2.5 մ չափերի 1 հատ, երկկողմանի	4.0քմ
34.	**Սևան/Սեմյոնովկա**	բնակավայրի կենտրոնական կանգառի հարևանությամբ՝ 1-ին փողոց	2.5մx2.5մ չափերի 1 հատ, երկկողմանի	4.0քմ
35.	**Սևան/Գագարին**	բնակավայրի կենտրոնական կանգառի հարևանությամբ՝ Գայի փողոց	2.5մx2.5մ չափերի 1 հատ, երկկողմանի	4.0քմ


Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Սևան քաղաք

ԳԾԱԳԻՐ



Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Վարսեր, Գագարին, Գեղամավան, Դդմաշեն, Ծաղկունք, Զովաբեր, Լճաշեն, Նորաշեն, Չկալովկա, Սեմյոնովկա, Ծովագյուղ բնակավայրեր

ԳԾԱԳԻՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

23 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2970-Լ

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2027ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ, ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Սևան համայնքի 2027թվականի բյուջեի եկամուտների եռամսյա բաշխման համամասնությունները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Սևան համայնքի 2027թվականի բյուջեի ծախսերի եռամսյա բաշխման համամասնությունները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել Սևան համայնքի 2027թվականի բյուջեի ծախսերի կատարման համապատասխան նախահաշիվները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 23
ք.Սևան

Հավելված N1
Հաստատված է Սևան համայնքի ղեկավարի
23.10.2026թ. թիվ 2970-Լ որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ

ՀԱՋ. ԴՐԱՄ

Տողի NN	Եկամտատեսակների անվանումները	տարի	այդ թվում ըստ եռամսյակների			
			I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	տարեկան
Ա	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ	2775034.0	693758.5	1387517.0	2081275.5	2775034.0
	այդ թվում՝		0.0	0.0	0.0	0.0
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	529650.0	132412.5	264825.0	397237.5	529650.0
1	*Գույքային հարկեր անշարժ գույքից*	*202950.0*	50737.5	101475.0	152212.5	202950.0
1.1.1.	Աշարժ գույքի հարկ	193800.0	48450.0	96900.0	145350.0	193800.0
1.1.2	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	4800.0	1200.0	2400.0	3600.0	4800.0
1.1.3	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	4350.0	1087.5	2175.0	3262.5	4350.0
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից		0.0	0.0	0.0	0.0
1.2	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	304900.0	76225.0	152450.0	228675.0	304900.0
1.3	*Տեղական տուրքեր*	*13800.0*	3450.0	6900.0	10350.0	13800.0
1.3.1	քաղաքաշինության գծով	1000.0	250.0	500.0	750.0	1000.0
1.3.2	Առևտրի և սպասարկումների գծով	12800.0	3200.0	6400.0	9600.0	12800.0
1.4	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր, որից	*8000.0*	2000.0	4000.0	6000.0	8000.0
1.4.1	ՔԿԱԳ բաժնի գծով		0.0	0.0	0.0	0.0
1.4.2	Նոտարական գրաս. գծով	8000.0	2000.0	4000.0	6000.0	8000.0
2.	*Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ սփացված կառավարման այլ մակարդակներից*	*2138704.0*	534676.0	1069352.0	1604028.0	2138704.0
2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա	2136307.2	534076.8	1068153.6	1602230.4	2136307.2
2.2	Տոտքեր ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից՝ աշնանացան ցորենի արտադրութ. խթանման ծրագրի համար		0.0	0.0	0.0	0.0
2.3	Պետ. բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամ. նպ. հատ./սուբվենցիա/	2396.8	599.2	1198.4	1797.6	2396.8
3	*ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	*106680.0*	26670.0	53340.0	80010.0	106680.0
3,1	Գույքի վարձակալությունից եկամուտ	49180.0	12295.0	24590.0	36885.0	49180.0
3.1.1.	Համայնքի սեփ. համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	10000.0	2500.0	5000.0	7500.0	10000.0
3.1.2	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետ. սեփ. համարվող հողերի վարձ. վարձավ.	32980.0	8245.0	16490.0	24735.0	32980.0

3.1.3	Համայնքի վարչ. կար. գտնվող պետ. և համ. սեփակ. ժատ. հող. կառուց. իր. դիմաց գանձվող վարձավճարներ	3200.0	800.0	1600.0	2400.0	3200.0
3.1.4	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	3000.0	750.0	1500.0	2250.0	3000.0
3.2	*Պետության կողմից ՏԻՄ պատ. լիազորութ. իրակ. ծախսերի ֆինան. համար ՊԲ ստացվող միջոցներ, որից ՔԿԱԳ պահ. ծախսեր*		0.0	0.0	0.0	0.0
3.3.	*Վարչական գանձումներ,որից*	*54000.0*	13500.0	27000.0	40500.0	54000.0
3.3.1	Տեղական վճարներ/աճուրդ,հասցե,փաստագր./	500.0	125.0	250.0	375.0	500.0
3.3.2	Համ. վարչ. տար. ինք. կառ. շենքշինութ. օրինակ. համար վճարներ	2000.0	500.0	1000.0	1500.0	2000.0
3,3,3	Արտադպրոց. նախադպ. ՀՈԱԿ ուսումնակ. վճարներ	6500.0	1625.0	3250.0	4875.0	6500.0
3,3,4	Կենցաղային աղբահանութ. վճար	45000.0	11250.0	22500.0	33750.0	45000.0
	Այլ եկամուտներ/գարնանացան, լրավճ.ՆՈՒՀ, դաստ/	3500.0	875.0	1750.0	2625.0	3500.0
Բ	*ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ա/թ*	*1780000.0*	50000.0	350000.0	625000.0	1780000.0
1	Հողի իրացումից մուտքեր	300000.0	50000.0	150000.0	225000.0	300000.0
2	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե	780000.0	0.0	100000.0	200000.0	780000.0
3	Կապիտալ դրամաշնոհներ միջազգային կազմակերպություններից /ԳՄԶԳ/		0.0	0.0	0.0	0.0
4	Կապիտալ սուբվենցիաներ /դրամաշնոհներ/	700000.0	0.0	100000.0	200000.0	700000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ	*4555034.0*	743758.5	1737517.0	2706275.5	4555034.0

Հավելված N2
Հաստատված է Սևան համայնքի ղեկավարի
23.10.2026թ. թիվ 2970-Լ որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԻ 2027Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱ ԲԱՇԽՈՒՄԸ

բաժին	խումբ	դաս	ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	տարի	այդ թվում ըստ եռամսյակների			
					I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	տարի
01	1	1	Համայնքի ղեկավարի աշխատակազմ	476544.0	119136.0	238272.0	357408.0	476544.0
01	3	3	ՔԿԱԳ բաժնի պահպանման գծով ծախսեր		0.0	0.0	0.0	0.0
01	6	1	Ընդանուր բնույթի հանրային ծառ,	251857.3	62964.3	125928.7	188893.0	251857.3
04	0	0	Ճանապ. տնտես. գծով ընթացիկ ծախսեր	6400.0	1600.0	3200.0	4800.0	6400.0
04	2	1	Գյուղատնտեսություն	15744.4	3936.1	7872.2	11808.3	15744.4
04	2	1	Ծաղկունքի ջրամատակարարում	3000.0	750.0	1500.0	2250.0	3000.0
05	1	1	**Աղբահանություն** Սուբսիդիա <<ՍՀԿՍ և Բ>> ՀՈԱԿ	350000.0	87500.0	175000.0	262500.0	350000.0
05	1	1	Դրամաշնորհ << Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ>> ՍՊԸ	124288.3	31072.1	62144.2	93216.2	124288.3
05	4	1	Կենսաբազմազանության և բնության պաշտպանության	5000.0	1250.0	2500.0	3750.0	5000.0
06	1	1	Բնակ. տնտես. գծով ընթացիկ ծախսեր	14000.0	3500.0	7000.0	10500.0	14000.0
08	**0**	**0**	**Մ Շ Ա Կ ՈՒ Յ Թ, այդ թվում**	**93700.0**	23425.0	46850.0	70275.0	93700.0
08	2	1	Սուբսիդիա ,, ԳԿՀ,, ՀՈԱԿ	28000.0	7000.0	14000.0	21000.0	28000.0
08	2	3	Սուբսիդիա "ՀՄԿ>> ՀՈԱԿ	49000.0	12250.0	24500.0	36750.0	49000.0
08	2	4	Մշակութային միջոցառումների կազմակերպման գծով ծախսեր	6100.0	1525.0	3050.0	4575.0	6100.0
08	3	1	Տեղեկատ. ծառ. ձեռք բերում՝	5500.0	1375.0	2750.0	4125.0	5500.0
08	3	2	Ընթացիկ դրամ. հրատարակչություն. խմբագրություններին	2100.0	525.0	1050.0	1575.0	2100.0
08	4	2	Նվիրատվություններ ՀԿ	3000.0	750.0	1500.0	2250.0	3000.0
09	**0**	**0**	**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, այդ թվում**	**630500.0**	157625.0	315250.0	472875.0	630500.0
09	**1**	**0**	**Նախադպրոցական կրթություն, որից**	**454500.0**	113625.0	227250.0	340875.0	454500.0
09	1	1	Սուբսիդիա թիվ 1 "Բողբոջ" մ/մ ՀՈԱԿ	59000.0	14750.0	29500.0	44250.0	59000.0
09	1	1	Սուբսիդիա թիվ 2"Զարթոնք" մ/մ ՀՈԱԿ	63000.0	15750.0	31500.0	47250.0	63000.0
09	1	1	Սուբսիդիա թիվ 3 " Հեքիաթ" մ/մ ՀՈԱԿ	73000.0	18250.0	36500.0	54750.0	73000.0
09	1	1	Սուբսիդիա թիվ 4 " Գալիք" մ/մ ՀՈԱԿ	55000.0	13750.0	27500.0	41250.0	55000.0
09	1	1	Սուբսիդիա Գագարինի մ/մ ՀՈԱԿ	28000.0	7000.0	14000.0	21000.0	28000.0
09	1	1	Սուբ. "Վարսերի մանկապարտեզ" ՀՈԱԿ	26000.0	6500.0	13000.0	19500.0	26000.0
09	1	1	Սուբ. "Լճաշենի մանկապարտեզ" ՀՈԱԿ	44000.0	11000.0	22000.0	33000.0	44000.0
09	1	1	Սուբ. "Զովաբերի մանկապարտեզ" ՀՈԱԿ	18500.0	4625.0	9250.0	13875.0	18500.0
09	1	1	Սուբ. "Դդմաշենի մանկապարտեզ" ՀՈԱԿ	35000.0	8750.0	17500.0	26250.0	35000.0

09			Սուբ. "Ծովագյուղի մանկապարտեզ" ՀՈԱԿ	40000.0	10000.0	20000.0	30000.0	40000.0
9805	1	1	Սուբսիդիա "Չկալովկայիմանկապարտեզ" ՀՈԱԿ	13000.0	3250.0	6500.0	9750.0	13000.0
09	**5**	**1**	**Արտադպրոցական դաստիարակություն, որից**	**176000.0**	44000.0	88000.0	132000.0	176000.0
09	5	1	Սուբսիդիա,, Մանկապատանեկան մարզադպրոց,, ՀՈԱԿ	65000.0	16250.0	32500.0	48750.0	65000.0
09	5	1	Սուբ.,, Երաժշտական դպրոց,, ՀՈԱԿ	61000.0	15250.0	30500.0	45750.0	61000.0
09	5	1	Սուբսիդիա "Արվեստի դպրոց,, ՀՈԱԿ	34000.0	8500.0	17000.0	25500.0	34000.0
10	5	1	Լճաշենի <<Մանկական Արվեստի դպրոց'>> ՀՈԱԿ	16000.0	4000.0	8000.0	12000.0	16000.0
10	7	1	**Սոցիալական հատուկ արտոնություններ, որից՝ նպաստներ բյուջեից**	**24000.0**	6000.0	12000.0	18000.0	24000.0
11	1	2	Վարչ. Բյուջեի պահուստային ֆոնդ ա/թ	780000.0		100000.0	200000.0	780000.0
11	1	2	Վարչական բյուջեի պահ. ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե		0.0	0.0	0.0	0.0
ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ				**2775034.0**	**498758.5**	**1097517.0**	**1696275.5**	**2775034.0**
01	1	1	Համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանման ծախսեր	15000.0	3750.0	7500.0	11250.0	15000.0
01	6	1	Ընդանուր բնույթի հանրային ծառայութ,	71750.0	17937.5	35875.0	53812.5	71750.0
					0.0	0.0	0.0	0.0
04	2	1	Ջրամատակարարման ծախսեր Ողոգում	160000.0	40000.0	80000.0	120000.0	160000.0
04	5	1	Ճանապարհային տնտեսություն՝ փոսային հիմնանորոգում ընդամենը, որից	1420250.0	0.0	210000.0	1065187.5	1420250.0
05	2	1	Կեղտաջրերի հեռացման գծով ծախսեր		0.0	0.0	0.0	0.0
05	4	1	Կենսաբազմազանության և բնության պաշտպանությաւն	5000.0	0.0	3000.0	3750.0	5000.0
06	1	1	Բնակարանային տնտեսություն/Լուսավորության ցանց/	58000.0	20000.0	29000.0	43500.0	58000.0
06	3	1	Խմելու ջուր	50000.0	12500.0	25000.0	37500.0	50000.0
08	0	0	Մշակութային ծառ./ մշ. տան կառուցում/				0.0	0.0
06	5	1	Բնակարանային շինանարար		0.0	0.0	0.0	0.0
ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ				**1780000.0**	**94187.5**	**390375.0**	**1335000.0**	**1780000.0**
ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ				***4555034.0***	592946.0	1487892.0	3031275.5	4555034.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2971-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն, 18.05 2006թ.թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով քաղ. Խաչիկ Վարդանյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, ք. Սևան, Ցամաքաբերդ հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 1465քմ մակերեսով հողատարածքը և հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփականություն իրավունք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Խաչիկ Հրանտի Վարդանյանին /ծնված՝ 13.04.1964թ./ պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Ցամաքաբերդ հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 1465քմ մակերեսով հողատարածքին կից՝ 293քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Խաչիկ Վարդանյանի սեփականության իրավունքը:
2. Խաչիկ Հրանտի Վարդանյանին պատկանող 1758քմ մակերեսով հողատարածքում 1970թ. կառուցված 101.52քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 71.17քմ/, 74.22քմ մակերեսով կիսանկուղը /ներքին մակերեսը՝ 59.06քմ/, 60.9քմ մակերեսով տնտեսական շինությունը /ներքին մակերեսը՝ 47.4քմ/, 78.7քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 66.70քմ/, 0.88քմ մակերեսով պարիսպը ճանաչել Խաչիկ Հրանտի Վարդանյանի սեփական գույքը՝ տրամադրելով՝ Սևանհամայնք, ք. Սևան, Ծովակալ Իսակովի փողոց թիվ 12 բնակելի տուն հասցե:
3. Խաչիկ Հրանտի Վարդանյանին պատկանող 1758քմ մակերեսով հողատարածքում 2020-2003թթ. կառուցված 52.08քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 40.44քմ/, 60.37քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 50.61քմ/, 17.05քմ մակերեսով աստիճանահարթակը և 22.90քմ մակերեսով ծածկը ճանաչել ինքնակամ շինություններ:

4. Խաչիկ Հրանտի Վարդանյանին պատկանող, 1758քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 249.0քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ծովակալ Իսակովի փողոց թիվ 12 / 1 հողամաս հասցե՝ ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքի 30% վճարելու պայմանով /1քմ՝ 563.25 դրամ/ օտարել Խաչիկ Հրանտի Վարդանյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 26
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2972-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով քաղ. Էդիկ Սարգսյանի դիմումը՝ Սևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի 1989թ. օգոստոսի 30-ի թիվ 12 նիստով Էդիկ Սարգսյանին՝ Սևան քաղաքի հացամթերքների կոմբինատի հյուսիսային ցանկապատին հարող ազատ տարածությունից անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 600քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

որոշում եմ.

1. Սևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի՝ 1986թ.մարտի 27-ի թիվ 3 նիստով ՝ Էդիկ Լևիկի Սարգսյանին / ծնված՝ 21.06.1963թ./ պատկանող Սևան քաղաքի հացամթերքների կոմբինատի հյուսիսային ցանկապատին հարող ազատ տարածությունից, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 600քմ մակերեսով հողատարածքում 1990թ. կառուցված երկհարկանի բնակելի տունը՝ 1-ին հարկ՝ 180.9քմ.մակերեսով /ներքին մակերեսը՝ 144.3քմ/, 2-րդ հարկ՝ 180.9քմ մակերեսով /ներքին մակերեսը՝ 146.0քմ/, 61.85քմ մակերեսով օժանդակ շինությունը /ներքին մակերեսը՝ 54.4քմ/, 22.94քմ մակերեսով տնտեսական շինությունը /ներքին մակերեսը՝ 16.11քմ/, 6.9քմ մակերեսով բաց պատշգամբը ճանաչել Էդիկ Սարգսյանի սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, 26 Կոմիսարների փողոց, 3-րդ փակուղի թիվ 10 բնակելի տուն հասցե:
2. Էդիկ Սարգսյանին պատկանող 600քմ մակերեսով հողատարածքում 1995թ.կառուցված 49.0քմ մակերեսով անավարտ շինությունը /ներքին մակերեսը՝ 35.2քմ/ ճանաչել ինքնակամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԷԴԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 26
ք.Սևան

3294

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2973-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Յուրիկ Բարսեղյանի դիմումը՝ ք. Սևան, Խաղաղության փողոցի վերջնամասում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 47.00քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Յուրիկ Ավետիքի Բարսեղյանի կողմից՝ ք. Սևան, Խաղաղության փողոցի վերջնամասում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 47.00 քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 42.80քմ/ և զբաղեցրած 47.00 քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի:
2. Յուրիկ Ավետիքի Բարսեղյանի կողմից ինքնակամ 47.00 քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 20263PBQTA /՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 29 / 92 ավտոտնակ հասցե:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 5-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 26
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2974-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Վալետա Ավետիսյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Վալետա Ավետիսյանին պատկանող, Վարսեր գյուղի հողային բարեփոխումների սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 25.03.1993թ. N44 արձանագրության համաձայն՝ Վալետա, Ռոմիկ և Գոհար Ավետիսյաններին անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 400քմ հողատարածքին կից՝ 24.4քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելո իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Վալետա Ավետիսյանին պատկանող, Վարսեր գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 25.03.1993թ. N44 արձանագրության համաձայն՝ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղում՝ անհատական բնակելի տան կառուցման համար Վալետա Մնացականի Ավետիսյանին /ծնված՝ 06.10.1949թ./, Ռոմիկ Վազգենի Ավետիսյանին /ծնված՝ 07.12.1972թ./, Գոհար Վազգենի Ավետիսյանին /ծնված՝ 21.05.1974թ/ հատկացված 1200քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 24.4քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Վալետա, Ռոմիկ և Գոհար Ավետիսյանների սեփականության իրավունքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Վարսեր, 11-րդ փողոց թիվ 54 / 1 հողամաս հասցե:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 26
ք.Սևան

3297

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2975-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արամ Նավասարդյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Արամ Նավասարդյանին պատկանող, Վարսեր գյուղի հողային բարեփոխումների սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 22.04.1991թ. N7 նիստի որոշմամբ Տաթևիկ Մարտիրոսյանին և Արամ Նավասարդյանին հատկացված 1500քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Արամ Սանասարի Նավասարդյանին պատկանող, Վարսեր գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 22.04.1991թ. N7 նիստի որոշմամբ՝ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղում՝ Արամ Սանասարի Նավասարդյանին / ծնված՝ 14.09.1967թ./, Տաթևիկ Մաքսիմի Մարտիրոսյանին /ծնված՝ 20.08.1972թ./ անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 1500քմ մակերեսով հողատարածքին կից՝ 93.8քմ մակերեսով հողատարածքը ճանաչել Արամ Նավասարդյանի և Տաթևիկ Մարտիրոսյանի սեփականության իրավունքը:
2. Արամ Նավասարդյանին և Տաթևիկ Մարտիրոսյանին պատկանող 1593.8քմ մակերեսով հողատարածքում 1956-1974թթ. կառուցված 153.5քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 116.7քմ/, 5.9քմ մակերեսով կաթսայատունը /ներքին մակերեսը՝ 4.6քմ/, 37.5քմ մակերեսով N1 անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 23.7քմ/, 51.7քմ մակերեսով N2 անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 41.4քմ/, 59.8քմ մակերեսով ավատոտնակը /ներքին մակերեսը՝ 48.6քմ/ ճանաչել սեփական գույք՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փողոց, 7-րդ նրբանցք թիվ 3 բնակելի տուն հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 26
ք.Սևան

3298

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2976-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն, 18.05.2006թ.թիվ 912-Ն որոշումներով և հիմք ընդունելով քաղ. Նադեժդա Բաղդասարյանի դիմումը՝ Սևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի՝ 1985թ. օգոստոսի 8-ի թիվ 10 նիստով Նադեժդա Բաղդասարյանին՝ Սևան քաղաքի Ցամաքաբերդ թաղամասի հարավային հատվածից՝ անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 580քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները ինքնակամ գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի 1985թ.օգոստոսի 8-ի թիվ 10 նիստով՝ Նադեժդա Խաչատուրի Բաղդասարյանին / ծնված՝ 22.10.1953թ./՝ Սևան քաղաքի Ցամաքաբերդ թաղամասի հարավային հատվածից անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 580քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Նադեժդա Բաղդասարյանի սեփականության իրավունքը:
2. Նադեժդա Բաղդասարյանին պատկանող 580քմ մակերեսով հողատարածքում 1992թ.կառուցված 76.31քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 63.10 քմ/, 9.56քմ մակերեսով տանիքային հարկը, 14.06քմ մակերեսով ծածկը /հաշվառման տեղեկանք՝ 2026CEBFY6/ ճանաչել ինքնակամ գույք տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ծովակալ Իսակովի փողոց, 1-ին նրբանցք թիվ 10 / 1 բնակելի տուն հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 26
ք.Սևան

3299

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2977-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N 550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Արտյոմ Գևորգյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 147 / 23 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 24092015-05-0022/ զբաղեցրած 0.0026 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Արտյոմ Ռոմելի Գևորգյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 147 / 23 հասցեում գտնվող անշարժ գույքի զբաղեցրած 0.0026 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.00195 հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 147 / 2 հողամաս, վկայական՝ 13102026-05-0030/՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Արտյոմ Ռոմելի Գևորգյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 4441.8 դրամ, վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 26
ք.Սևան

3300

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2978-Ա

ՀՈՂԱՄԱՍՆ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասիի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 18-րդ կետերով և 11-րդ կետի զ) ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա Նորաշեն բնակավայրի գլխավոր հատակագիծը և քաղաքացի Կարինե Հակոբյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, գ. Նորաշեն հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրն պատկանող 0.30828 հա մակերեսով հողամասի /վկայական՝ 31082016-05-0008/ նպատակային և գործառնական նշանակությունները Նորաշեն բնակավայրի գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Նորաշեն հասցեում գտնվող 0.30828հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 31082016-05-0008/ համաձայն ներկայացվող հատակագծերի բաժանել 2 միավոր գույքի՝
1) առաջին միավոր գույք՝ 0.17185հա մակերեսով գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, արոտավայր՝ գործառնական նշանակության հողամաս;
2) երկրորդ միավոր գույք՝ 0.13643հա մակերեսով գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, արոտավայր՝ գործառնական նշանակության հողամաս:
2. Գեղարքունիքի մարզ, գ. Նորաշեն հասցեում գտնվող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, արոտավայր՝ գործառնական նշանակության 0.13643հա մակերեսով հողամասի /կադաստրային ծածկագիր՝ 05-070-0007-0160/ նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա Նորաշեն բնակավայրի գլխավոր հատակագծին՝ բնակավայրի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Նորաշեն, 3-րդ փողոց, 1-ին փակուղի թիվ 1 / 1 բնակելի տուն հասցե:

3. Սևան համայնքի բյուջեի 900165101255 հաշվհամարին վճարել հողամասերի կադաստրային արժեքի՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 600019.14 դրամ:
4. Սեփականության իրավունքով Կարինե Հակոբյանին պատկանող, Սևան համայնք, Նորաշեն գյուղում գտնվող 0.13643հա մակերեսով հողատարածքում՝ սեփականատիրոջ կողմից 2010-2016թթ. ինքնակամ կառուցված 16.96քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը՝ 10.31քմ/ և 6.09քմ մակերեսով աստիճանահարթակը, 122.51քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 97.68քմ/, 26.24քմ մակերեսով աստիճանահարթակը, 86.98քմ /ներքին մակերեսը՝ 69.04քմ/ և 54.87քմ /ներքին մակերեսը՝ 48.43քմ/ մակերեսներով անասնաշենքերի, 6.26քմ մակերեսով ծածկի կառուցման աշխատանքները ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026NLZ2UP/՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 874 դրամ:
5. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Նորաշեն գյուղում գտնվող 0.13643հա մակերեսով հողատարածքում՝ սեփականատիրոջ կողմից 2021-2025թթ. ինքնակամ կառուցված 33.78քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 7 28.91քմ/, 91.43քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 78.39քմ/, 26.68քմ մակերեսով շվաքարանը, 45.11 քմ մակերեսներով պարիսպները ճանաչել ինքնակամ:
6. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 26
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2979-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 02.02.2002թ. թիվ 88 որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Հովհաննես Թադևոսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Դդմաշեն, 6-րդ փողոց թիվ 8 հասցեում գտնվող, 05-030-0062-0009-002 կադաստրային ծածկագրով 70.59քմ մակերեսով օժանդակ շինություն-անասնագոմ անշարժ գույքից 15.72քմ մակերեսով շինության գործառնական նշանակությունը փոխելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Դդմաշեն, 6-րդ փողոց թիվ 8 հասցեում գտնվող, 05-030-0062-0009-002 կադաստրային ծածկագրով 70.59 քմ մակերեսով օժանդակ շինություն-անասնագոմ անշարժ գույքից 15.72քմ մակերեսով օժանդակ շինության նպատակային նշանակությունը փոխել հասարակականի, գործառական նշանակութունը՝ առևտրի սրահի:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 26
ք.Սևան

3303

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2980-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 2311-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի սեպտեմբերի 9-ի «Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի սեպտեմբերի 3-ի N 2285-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 2311-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 26
ք.Սևան

3304

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2981-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 2496-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի սեպտեմբերի 23-ի «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» 2496-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության» բառերի փոխարեն կարդալ «այլ հողեր՝ գործառնական նշանակության» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 26
ք.Սևան

3305

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2982-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 2094-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի օգոստոսի 14-ի «Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 23-ի N 1857-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 2094-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 26
ք.Սևան

3306

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2983-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2605-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի սեպտեմբերի 28-ի «Հողամասի գծային չափերի, երկրաչափական պատկերի և տեղադիրքի ուղղման մասին» N 2605-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հողամասի գծային չափերի, երկրաչափական պատկերի և տեղադիրքի ուղղման, գործառնական նշանակության փոփոխման մասին»;

2) որոշման նախաբանում «N 698-Ն որոշմամբ» բառերից հետո ավելացնել «Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով» բառերը;

3) որոշման մեջ ավելացնել նոր կետ՝ «Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Դդմաշեն, 1-ին փողոց թիվ 34 հասցեում գտնվող հողատարածքի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման հողամասի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 26
ք.Սևան

3307

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2984-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Սարգիս Բենյամինյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 41 / 8 հասցեում կառուցված 28.50քմ մակերեսով ավտոտնակը, 28.50քմ մակերեսով տնտեսական շինությունը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 28.50քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չի հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 41 /8 հասցեում գտնվող, Սևանի համայնքի ղեկավարի՝ 17.09.2026թ. թիվ 2439-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 07.10.2026թ. պետական գրանցում ստացած 28.50քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, 28.50քմ մակերեսով տնտեսական շինությունը՝ 1քմ՝ 3346դրամ, զբաղեցրած 28.50քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5 դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած Սարգիս Բենյամինյանին:
2. Քաղ. Սարգիս Ռուշանի Բենյամինյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 26
ք.Սևան

3308

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2985-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

